«ՊԱՇՏՊԱՆԻՐ ՋՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔԸ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ «ԷԿՈԼՈՒՐ» ՀԿ-Ի ԱՆՑԿԱՑՐԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար համայնքը գտնվում է Միջինարաքսյան հարթավայրում՝ ծովի մակերևույթից 843 մ բարձրության վրա, Արմավիր քաղաքից 13-14կմ հարավ-արևելք: Համայնքի մակերեսը 7.3 ք/կմ է: Բնակչության թիվը 1196 է, կազմը՝ հայ և եզդի (ընդհանուր բնակչության 47,7%), տնային տնտեսությունների թիվը՝ 184: Արտաշարն ունի միջնակարգ դպրոց:

Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը 528,39-հա է, որից՝

1) վարելահողեր՝ 354-հա
2) այլ հողատեսքեր՝ 144,39- հա
4) ջրանցքներ՝ 30,0 հա:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ Արտաշարի գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Արմավիրի Մայր ջրանցքի և Սև ջրի ջրերով: Սակայն «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն Արտաշարում իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզեց, որ Սև ջուր գետի ցամաքման պատճառով «Արմավիր» ՋՕԸ-ն Արտաշարին ջուր է տրամադրում Ախուրյան-Արաքս ջրատարից, որտեղ ջրակորուստները մեծ են և որին միանում են Մեծամոր և Հոկտեմբերյան քաղաքների կոյուղաջրերը: Կեղտաջրերով ոռոգումից խուսափելու համար Արտաշար համայնքի բնակիչների մի մասն իրենց հողամասերում, ինչպես նաև տնամերձներում առանց ջրօգտագործման թույլտվության հորատանցքեր են փորել, որոնց ջրերով իրականացնում են ոռոգում: Բացի այդ, համայնքը ոռոգում իրականացնում է համայնքի տարածքում գտնվող չգործող ավազի հանքի տարածքում կուտակվող ընդերքից դուրս եկող ջրերով:

Արտաշարի ընդհանուր 354 հեկտար ոռոգելի վարելահողերից, ըստ Արտաշարի համայնքապետ Մանվել Օհանյանի, շուրջ 70 հեկտարը չի ոռոգվում ջրի սակավության կամ բացակայության պատճառով: Համայնքի 46 հա հողերն աղակալված են և շուրջ 70 հեկտարն էլ՝ ճահճացած և ենթակա չեն մշակման:

Նկ.1. գյուղի տեղադիրքը

Համայնքի խնդիրներն են՝
- Ոռոգման ջրի ներքին ցանցի վերանորոգումը
- Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգումը:

2017-2021թթ-ի համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում են ոռոգման ջրի ներքին ցանցի նորոգման և 1800 մետր խմելաջրի ջրագծի խողովակի փոխարինման միջոցառումներ՝ համապատասխանաբար 12 մլն դրամ և 30,0 մլն դրամ գումարի նախագծային արժեքով:

Ծրագրի «Հանդիպումներ բնակիչների հետ՝ խնդիրները լսելու և լուսաբանելու, հարցաթերթիկի լրացման համար» 1.1 բաղադրիչի շրջանակներում կայացած հանդիպման արդյունքում լրացվել է ջրի իրավունքի հետ կապված 19 հարցերից կազմված 13 հարցաթերթիկ:

Հարցման նպատակն էր պարզել՝

- ջրի իրավունքները սահմանող ՀՀ օրենսդրության վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության աստիճանը
- բնակիչների ջրի իրավունքների խախտումների դեպքերը
- բնակչության՝ ջրի իրավունքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը
- վերջին տարիներին Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի նվազման պատճառներին վերաբերող բնակիչների գնահատականը
- ձկնային տնտեսությունների զարգացման վերաբերյալ բնակիչների մոտեցումները
- ոռոգման ջրի մատակարար ՋՕԸ-ի աշխատանքների գնահատականը
- ջրի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու հարցում բնակիչների իրավունքների իրացման մակարդակը:

Հարցաթերթիկների վերլուծության արդյունքները

1. Չնայած նրան, որ հարցվածների 75%-ը պատասխանել է, որ ամբողջությամբ կամ մասամբ ծանոթ է ջրի իրավունքները սահմանող ՀՀ օրենսդրությանը, այնուամենայնիվ, դրական պատասխան տվողներից ոչ ոք չի կարողացել նշել կարգավորող նորմատիվ ակտերի ամբողջականությունը, լավագույն դեպքում նշել են այդ իրավունքները կարգավորող մի քանի իրավական ակտերի անվանումներ՝ հիմնականում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ՀՀ ջրային օրենսգիրք, կամ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր:

2. Ըստ հարցման արդյունքների՝ վերջին 10 տարում խախտվել են ջրի նկատմամբ բնակիչների իրավունքները /հարցվածների 75%-ը նշել է, որ խախտվել են իրենց իրավունքները, իսկ 25%-ը նշել է, որ չեն խախտվել իրենց իրավունքները /դրանք արտահայտվել են՝ կոմունալ-կենցաղային կարիքների բավարարման նպատակով անհրաժեշտ որակի և քանակի ջրի անբավարարությամբ, մշակովի հողատարածքների ոռոգման նպատակով անհրաժեշտ որակի և քանակի ջրի անբավարարությամբ, ոռոգումն ապահովող ՋՕԸ-ի կողմից ջրի բաշխման գործընթացում մշակաբույսերի վեգետացիան ապահովող անհրաժեշտ ջրի նորմաների անտեսմամբ/:



Նկ. 2 Ջրի իրավունքների խախտման պատկերը Արտաշար համայնքում

3. Ըստ հարցվածների՝ իրենք զրկվել են խմելու համար բավարար քանակի ջուր ունենալու իրավունքից / հարցվածների 70%-ի կարծիքով իջել են խմելու ջրի հորերի մակարդակները, իսկ 30%-ը կարծում է, որ ցամաքել են հորերը/։

4 Ըստ հարցման արդյունքների՝ պարզվել է, որ ներհամայնքային արտեզյան հորերում ջրի մակարդակի իջնելու արդյունքում դժվարացել է ոռոգման համար պահանջվող ջրի քանակի ապահովումը և համայնքի բնակիչների մի մասը հրաժարվել է որոշ գյուղատնտեսական հողերի մշակումից, իսկ հողի որակի փոփոխության արդյունքում որոշ մշակաբույսեր՝ ձմերուկ, սեխ այլևս չեն աճում։

5. Հարցվածների 90,9 % -ը կարծում է, որ վերջին տասը տարում կրել է եկամուտների կորուստ, սահմանափակվել է աշխատանքի և սեփական ապրուստի եկամուտներ ունենալու իրենց իրավունքը, մասնավորապես՝ բանջարանոցային կուլտուրաների իրացումից ստացվող եկամտի մասով՝ 58,33%, մշակովի հողատարածքներից ստացվող եկամուտների մասով՝ 41,67%։

6. Համայնքի հարցված բնակիչների 62,5, %-ը կարծում է, որ ջրի սակավությունը և խորքային հորերի ցամաքելը պայմանավորված է Արարատյան ավազանի ստորերկրյա ջրերի ձկնաբուծության նպատակով անխնա և անսահմանափակ օգտագործման հետ, իսկ 25 % -ն դժվարացել է այդ կապը գնահատելու հարցում։ Հարցվածների 12,5 %-ը գտնում է, որ ձկնաբուծության ծավալների մեծացումը չի ազդում ջրի սակավության և դրա որակական փոփոխությունների և խորքային հորերի ցամաքեցման վրա։



Նկ. 3 Ձկնաբուծության ազդեցության գնահատականը համայնքի խմելու և ոռոգման ջրի քանակի վրա

7. Ըստ հարցվածների **54,55** %-ի՝ ոռոգման ջրի մատակարար «Արմավիր» ՋՕԸ-ն ոռոգման ջուրը բաշխում է անարդարացի, 18,18 տոկոսն ուշադրություն չի դարձրել այդ հանգամանքի վրա, իսկ 27,27 %-ը կարծում է, որ բաշխումն արդարացի է կատարվում:



Նկ.4 Բնակիչների տված գնահատականը «Արմավիր» ՋՕԸ-ին

ՋՕԸ-ն ոռոգելի տարածքների գլխամասը չի ապահովել ջրի հաշվառքի սարքերով /83,33%/, հետևապես այդ սարքի ստուգաչափման, ցուցմունքի գրանցման, ժամանակավորապես չաշխատելու դեպքում դրա կապարակնքման պայմանի մասին բնակիչները տեղյակ չէին: Բնակիչները ոռոգման ջրի մատակարարման պայմանագիրը ստորագրել են՝ առանց դրանում ամրագրված պայմաններին ծանոթանալու / **46,2** %/: Ոռգման ջրի մատակարարման պահանջարկի հայտ ներկայացնում են տարեկան կտրվածքով:

8.Բնակիչների 38,47%-ի գնահատմամբ իրենց **կողմից վճարվող ջրի սակագինը համարժեք է մատակարարված ջրի քանակին և որակին,** 46,15%-ը կարծում է, որ դրանք իրար համարժեք չեն, իսկ 15,38%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին:



Նկ.5 Ջրի սակագնի և մատուցված ծառայության որակի համարժեքության գնահատումը. % -ով

9. Խախտվել է հարցվածների 54,54 %-ի ջրի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու իրավունքը, իսկ 18,19 %-ը չի օգտվել այդ իրավունքից:



Նկ.6 Ջրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման պատկերը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հարցման արդյունքների բացահայտումների հիման վրա կարելի է

եզրակացություն անել, որ Արտաշար համայնքում խախտվել են.

1. Բնակչի կյանքի և անվտանգության համար համապատասխան քանակի խմելու ջուր ունենալու իրավունքը:
2. Տարածաշրջանին առանձնահատուկ գյուղատնտեսությամբ զբաղվելու բնակչի աշխատանքի իրավունքը՝ դրա համար համապատասխան որակի և քանակի ոռոգման ջուր չունենալու հետևանքով:
3. Ջրային ոլորտում բնակչի տեղեկատվություն ստանալու իրավունքը
4. Ջրային ոլորտում որոշումների կայացման մեջ մասնակցություն ունենալու իրավունքը:
5. «Արմավիր» ՋՕԸ-ի հետ կնքված ոռոգման ջրի մատակարարման պայմանագրային իրավունքները:

Սույն հաշվետվությունը կազմվել է «Պաշտպանիր ջրի նկատմամբ քո իրավունքը» ծրագրի շրջանակներում Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության միջոցով, որի ընթացքում արտահայտված տեսակետները կամ ներկայացված նյութերի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

2019թ.